ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
40	թիկնապայուսակ	ARYAN	ARYAN INTERNATIONAL TRADE CO LIMITED	1. Ուսապարկ: Ուսապարկը կազմված է պարկից, ուսագոտիներից և կափույրով գրպաններից: Արտադրվում է ՁՈՒ դաշտային ՍՁ համազգեստի երանգով կամ դեղնականաչավուն գույնի՝ պոլիվինիլ քլորիդե գործվածքից: Գործվածքի խտությունը՝ 600 ԴԵՆ: Ուսապարկի մեջքամասի հատվածը պետք է լինի ոչ պակաս քան 52 սմ երկարության և ոչ պակաս 32 սմ լայնության, կողային պատերը՝ ոչ պակաս քան 18 սմ լայնության,իսկ հատակը 18 սմ լայնության և ոչ պակաս քան 35 սմ երկարության: Ուսապարկի բերանը մշակված է անջրաթափանց՝ պաշտպանական կամ սև գույնի՝ առնվազն 70 գրամ մակերեսային խտությամբ օքսվորդ գործվածքից՝ 98-102 սմ պարագծով և 20-22 սմ բարձրությամբ, որը և վերին և ստորին հատվածներում փակվում է 1.5-2.0 սմ ծալվածքի մեջով անցնող

				քուղերով: Քուղերի եզրին ամրացված է զսպանակային կարգավորիչ: Ուսապարկը փակվում է եզրերը էլաստիկ ժապավենով մշակված կափույրով, որի վրա՝ կափույրի հիմնամասի կարից սկսած մշակված են երկու հատ ոչ պակաս քան 2.2 սմ լայնության և 35-37 սմ երկարության ժապավեններ, որոնք ոչ պակաս քան 3 սմ լայնության պլաստմասե ճարմանդներով միանում են ուսապարկի դիմային մասի՝ ուսապարկի հատակի եզրագծից ամբողջ երկայնքով ձգվող՝ 60-65 սմ երկարության և ոչ պակաս քան 2.2 սմ լայնության ժապավեններին: Ուսապարկի բերանը փակող կափույրի հիմնամասի կարով՝ ետնամասի ամբողջ լայնությամբ՝ կափույրի ամրությունը ապահովելու նպատակով, կրկնակի շերտով մշակված է 2.0-2.5 սմ լայնության երեսացուի գործվածք, իսկ դրանից 3.0-4.0 սմ ներքև՝ ուսագոտիների ինչպես նաև բռնակի ամրությունը ապահովելու նպատակով, նույնպես ետնամասի ամբողջ լայնությամբ՝ կափույրի ամրությունը ապահովող կրկնակի շերտին զուգահեռ մշակված է 5.0-6.0 սմ լայնության՝ կրկնակի շերտով նույն երեսացուի գործվածք: Ուսապարկի երկու կողմերից՝ վերին եզրից 18-22 սմ բարձրության և ստորին եզրից 11-13 սմ բարձրության վրա մշակվում են ոչ պակաս քան 2.2 սմ լայնության և 37-40 սմ երկարության երկու ժապավեններ, որոնք ոչ պակաս քան 2.2 սմ լայնության հակակորոզիոն ներկով ներկված երկաթյան ճարմանդներով միանում են ժապավենների ուղղությամբ տեղադրված՝ ոչ պակաս քան 2.2 սմ լայնության ժապավեններին: Քնապարկը ուսապարկի

				վրա ֆիքսելու նպատակով, ուսապարկի հատակի աջ և ձախ լայնակի եզրերից 4.0-7.0 սմ հեռավորության՝ հատակի երկայնակի եզրակարով մշակված են ոչ պակաս քան 2.2 սմ լայնության և 70-80 սմ երկարության երկու ժապավեններ, որոնք ոչ պակաս քան 2.2 սմ լայնության հակակորոզիոն ներկով ներկված երկաթյան ճարմանդներով միանում են հակադիր ուղղությամբ տեղադրված ոչ պակաս քան 2.2 սմ լայնության ժապավեններին: Բոլոր ժապավենների վրա՝ ժապավենի գույնով պետք է մշակված լինեն 0.8-1.0 սմ լայնության երկու հատ էլաստիկ կամրջակներ, ինչպես նաև ազատ եզրերը պետք է լինեն ծալված և վրակարված: Ուսապարկի դիմային մասում՝ հավասարաչափ, կրկնակի կարով կարված են երեք հատ՝ 23-25 սմ երկարության, 10-11 սմ լայնության և 7.0-8.0 սմ բարձրության ծավալուն վրադիր գրպաններ, որոնք փակվում են ոչ պակաս քան 44 սմ տրամագծով առանձին կափույրներով: Գրպանները կոճկվում են գրպանի վրա մշակված ոչ պակաս քան 2.2 սմ լայնության և 10-11 սմ երկարության, իսկ կափույրի վրա՝ ոչ պակաս քան 2.2 սմ լայնության և 3.0-4.0 սմ երկարության մշակված ժապավեններով և ոչ պակաս քան 3.0 սմ լայնության պլաստմասե ճարմանդներով: Գրպանների հատակների միջնամասում տեղադրված են մինչև 1.0 սմ տրամագծով մեկական կոճանցքեր: Մեջտեղի գրպանի աջ և ձախ մասերի՝ վերին և ստորին հատվածներում՝ իրարից 11-12 սմ հեռավորության վրա մշակված են 2.0-2.5 սմ լայնության կամրջակներ, որոնց մեջով անցնում են ուսապարկի կափույրին՝

				պլաստմասե ճարմանդով միացող հատակի եզրագծից ամբողջ երկայնքով ձգվող՝ 65-70 սմ երկարության և ոչ պակաս քան 2.2 սմ լայնության ժապավենները: Ուսապարկի մեջքամասում՝ ազգանվան տեղադրման համար պետք է մշակված լինի թափանցիկ պոլիէթիլենային՝ վերնամասից բացվածքով, 6.0-8.0 սմ կողմերով քառակուսի: Ուսապարկի մեջ՝ մեջքամասի վրա մշակված է ոչ պակաս քան 70 գրամ մակերեսային խտությամբ անջրաթափանց գործվածքից, ոչ պակաս քան 30 սմ լայնության և ոչ պակաս քան 50 սմ երկարության չափսերով գրպան պահոց, որը փակվում է կպչուն ժապավենով: Գրպան-պահոցի ներսամասում տեղադրվում է ոչ պակաս քան 28 սմ լայնության և ոչ պակաս քան 45 սմ երկարության չափերի 10 մմ տրամագծով ալյումինե ամրաշրջանակ: Ուսապարկն ունի պլաստմասե ճարմանդներով կարգավորվող երկու ուսագոտի, որոնց մեջ տեղադրված են 37-40 սմ երկարության, 7.0-8.0 սմ լայնության և 1.0-1.2 սմ հաստությամբ բարձիկներ: Ուսագոտիները միանում են միմյանց ոչ պակաս քան 2.2 սմ լայնության ժապավենով, որի վրա մշակված են երկու պլաստմասե կարգավորիչ և մեկ ոչ պակաս քան 3.0 սմ լայնության պլաստմասե ճարմանդ: Ուսագոտիների ամբողջ երկայնքով մշակված է ոչ պակաս քան 2.2 սմ լայնության ժապավեն, որի ստորին եզրին մշակված է պլաստմասե կարգավորիչ և վերջինիս միջոցով այն միանում է ուսապարկի մեջքամասի ստորին հատվածներում մշակված է ոչ պակաս քան 7.0 լայնության, ոչ պակաս քան 12 սմ երկարության և 1.0-1.2 սմ հաստության բարձիկների

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՏՏվ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
40				
				կողային կարերի եզրերից՝ եռանկյունաձև գործվածքի մեջ ներկարված՝ ոչ պակաս քան 2.3 սմ լայնության և ոչ պակաս քան 50 սմ երկարության ժապավենի միջոցով: Ուսապարկի մեջքամասի ստորին հատվածում մշակված է ոչ պակաս քան 12 սմ լայնության և ոչ պակաս քան 25 սմ երկարության լրացուցիչ երեսացուի գործվածք՝ որի մեջ տեղադրված է 1.0-1.2 սմ հաստության սպունգե բարձիկ: Թիկունքի հատվածում՝ ստորին եզրից 16-16.5 սմ բարձրության և կողային եզրի կարից 3.0-5.0 սմ դեպի կենտ մշակված է ոչ պակաս քան 7.0 սմ լայնության և ոչ պակաս քան 18 սմ երկարության լրացուցիչ երեսացուի գործվածք՝ որի մեջ տեղադրված է 1.5-2.0 սմ հաստության սպունգե բարձիկ: Ուսապարկի ստորին հատվածում մշակված երկու բարձիկները միմյանց հետ՝ միանում են ոչ պակաս քան 5.0 սմ լայնության պլաստմասե ճարմանդով և բարձիկների եզրակարերից ներկարված ոչ պակաս քան 5.0 սմ՝ լայնության երկու ժապավենով որոնցից յուրաքանչյուրը ունի մեկ պլաստմասե կարգավորիչ և ոչ պակաս քան 50 սմ երկարություն: Ուսապարկի ուսագոտիների միջև՝ ուսագոտիների վերին եզրակարերից ներկարված է ոչ պակաս քան 5.0 սմ լայնության և 30-32 սմ երկարության միջնամասում լայնությամբ երկտակ ծալված բռնակ: Մնացած բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 3.0%: Փաթեթավորումը պարկերով, արկղում 5 հատից ոչ պակաս: Պարկերը պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի արտադրանքի անվանումը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները, քանակն, արտադրման տարեթիվը: